

մարմինն մէջ՝ իր տենչանքներուն զոհա-
ցումը... Ի՞նչ սարսուռ, ի՞նչ զօղմանի-
նդեան... Եւ սակայն դեռ հարիւրաւորներ
իրենց անլուռ մարտիրոսութիւնն օրէ օր
կը նորոգեն՝ փաշայի մը կղզիացած սե-
նեակին կամ վալիի մը շրջապահ կանա-
նոցին մէջ, առանց կարենալու փրկութեան
արեգակը նշմարել... Անոնց հեծեծանք-
ները՝ ներքիններուն դիւային քրքիջնե-
րուն մէջ կը զսնեն իրենց արձագանքը,
անոնց աղօթքի մրմունջները՝ անհաւատ-
ներու քստմնասարսուռ հայհոյանքներուն
մէջ կը խեղդուին...

Հայեր, այս որբերը մեր վերածնող
հայրենիքին պլպլացող յոյսերն են, չի
թողունք որ ի սպառ մարին, կորսուին,
փրկենք զիրենք։ Այո՛, պէտք ենք լալ մեր
սիրելեաց կորուստին վրայ, պէտք ենք
յուզուիլ։ Բայց չի մոռնանք որ անոնց
թողուցած աւանդներուն օգնելու ենք, ոչ
խօսքով այլ գործով։

Շատ գովելի է Կ. Պօլսոյ և Չմիւռնիայի
հայութեան վարմունքը այդ որբերուն հան-
դէպ, ուր բացի զանազան Որբանոցներէ՝
որ մեծամեծ հարուստներու զբամանութիւն-
ութեամբ կը պահուին, ամէն ընտանիք՝
իր կարելիութեան չափով կը խնամէ մի
քանի որբիկներ... օրինակ մը՝ որ նոյն
իսկ եւրոպայի է՛ն քաղաքակիրթ ազգի մը
քով երբէք տեսնուած չէ։ Բայց շատ կա-
րեւոր է հիմնել մասնաւոր յանձնախումբ
մը, որ եւրոպական զլխաւոր պետութեանց
պաշտպանութեամբ, շրջի Հայաստան՝ լեռ-
ներու և ձորերու մէջ թափառող այդ սո-
վատանջ բեկորները հաւաքէ, փաշաներու
և վալիներու կանանոցներէն կորզէ այն
բոլոր անգիտակից կրօնափոխները, կեղբո-
նացելով զանոնք յարմար որբանոցներու
մէջ...

ՄԻԼԻՆԸ ՇԵԽԻԿԵՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՐՈՒՅԸ

✽ ✽

Գարուն, արեւ պատահը մ'է ոսկեգոծ
Շիրիմներուն վրայ փրկուած...
Գետերն ի՞նչպէս պըղտոր են,
Ու թանձրօրէն կը հոսին
Խուլ մոռնչիւնով մ'հեծելըտագին ու ցաւոտ...
Եւ ալիքները ծանրաբեռ են դարձել,
Ու կը նետեն ավերուն վրայ ցիրուցան
Տարալուծուած դիակներ
Որոնք ահա խորհրդանիշն են զոգցես
Գարնան վըճիտ ու կենսավառ երկունքին,
Որ կը ցայտէ քոյր ու ծաղիկ լուսեղէն...
Կը հալի ձիւնն, և հոս ու հոն կ'երեւին
կէս մը թաղուած բոսորանիւրկ հողին մէջ
Գանկեր, կուրծքիւ ջարդուփշուր,
Եւ բուռնցքներու՝ դէպ ի երկինքն բողոքող
Վերջին պըրկումը գայրոյթով քարացած...
Կարծես ձմեռն ըլլար պատահք մի համայն
Ձոր կը վերցնէ զարունն ահա բանալով
Գերեզմաններ. գերեզմաններ անծանօթ
Ու մերկութեամբ խղճալի՝
Որ իր ծաղկումը բաւական պիտ' ըլլայ
Շատ աւելի դառնակսկիծ տեսիլքով
Մեր աչքերէն ծածկելու...
Դաշտերն ամբողջ գերեզմաննոց են հիմա,
Ձիւնը մաշեր է բոլոր
Հէթ մեռելներն որոնց վրայ սեւածաւ
Անթիւ բոցիւր պատառոտուն կ'ալիւնին...
Ռ՞որ են վարդերն անցեալին, ո՞ր բոյներուն
Նըւագոն անոյշ իր զարթօնքով խնդունակ...
Չանցնիր մեղու մը լոյսին մէջ ոսկեղէն,
Ոչ իսկ արտոյտ մը կամ ծիծառ մը դարձած
Դէպ ի երկիրն Հայութեան....

Աւերակները ձիւնհալով կը փըլչին,
Եւ բլուրներու կողմէն
Դէպ ի գետերն ու ճամբաներն ամայի
Կ'իյնան զլուխներն յօշոտուած,
Ու մարմիններ այլախոսակ
Կը թանձրանան համաձուլուած իրարու
Եւ կոյտ առ կոյտ կը թափին
Աղիքներու ողկոյզներով զարաբոյր...

Հոն ուր գարունն ամենագեղն էր, այսօր
Չունի ոստն իսկ նըլենիի մը ծաղկած,
Ոչ իսկ նուագի մը վերջին շնչող զըւարթ,
Մահաշըշուկ լըռութիւնն այս կը խռովէ

Եւ ուրիշներ արտասուեցով խեղդւած
կը ծածկէն բխէր մեռելներ
Գանգուրներովը մոխրագէտ մեր դըժբախտ
Ու մահացած մայրերուն...
Անդորրուիժն շիրմական...
Ու միայն դեռ փըլուզուած ու հողերուն
Դիակներով ծանրացած՝
Որ խուլ ձայնով մը լոյսին մէջ՝ արիւնոտ
Իր խորհուրդները կու լայ...

Հոն ուր միայն կը հոսէր ակը նեկտար,
Փեթական՝ իր մեղրը ոսկի,
Ու պատուգներ կը յորդէին աւելով,
Հոն ուր սօսիւն կը սօսափէր, ուր երէկ
Աստուածներուն գեղեցկութիւնը կ'ապրէր,
Եւ Անահիտ իր ոսկեծնլ կողերէն
կը թափէր բեղմը և լոյս ամէն ակօսի...
Հոն ուր դաշտերը հասկերով ծածկուած
Ու բոցավառ՝ կակեցկուրով, կու տային
Իրենց հունձքերն աստուծոյն համար խնկարոյր,
Հիմա միայն գերեզմաննոց է կարմիր...

Ո՛ր եւ խաչերն ու շիրիմները սակայն,
Ո՛ր և նոճին և իր ըստուերը բուստտ,
Ամպհոփանի մեռելներուն անծանօթ...
Ա՛հ գէթ անուն մը տեսնեն
Աչքերս՝ անուն մը, յիշատակ մը որուն
Դանակներս կիծակէի իմ սիրտը կտորի՝
Երազներու բազմաքանդակ ծաղկանօթ...

Ի գո՛ր, ի գո՛ր ուխտաւորի քայլերով
Եւ կը յուսամ մեն՝ հանգըրուան մը հասնիլ,
Մասիսն ամբողջ և Արարատը համայն
Աւերներուն սև տըխուրութիւնն է հագած...
Ու գիշերուան ժամերուն
Փապարներէն կը փախչին
Բուերը ժանտ երկարօրէի վայելով,
Ու թախծադէմ լուսընկան
Մըթակարմիր աղօտ շահով մը շըջած՝
Կիրճերուն մէջ կը սրսկէ
Արիւնոտ թուփ իր դարաւոր հիւծախտին...

Ի՛նչ արշալոյս պիտի ծագի պատեռով
Մահաբոյր քողն այն ահելի գիշերին,
Հայրենիքիս կողերուն մէջ վիրազեղ
Թափելով կրակն իր ոսկեբոց ու մաքուր,
Զայն ընելու համար նորէն Անահիտ,
Աստուածուհին գեղաբարձ...
Իր երկընթին աստեղակուտ կամարով
Տալու վահագն մը դարձեալ
Վիշապներու բզըքտիչ...

Մարմինն անոր ճառագայթով մարձելու,
Եւ աչքերուն մէջ թախիծով մը թագնած
Վառելու շահն Ազատութեան Արեւին...
Եւ իր վարսերը թանձրօրէն արիւնոտ
Հըրդենելու որպէս կայծակն ամպրոպին
Նոճիպարիտակ անտառին բաշը մըռայլ...

Լուսահեղեղ ի՛նչ վաղորդային պիտի գայ,
Ի՛նչ արշալոյս խորհրդագեղ՝ մահէն վերջ՝
Գերեզմանները ծածկելու վերստին
Ոսկեքմբուռն հասկերով,
Ու վառելու փայլակնացայտ մանգաղներ
Դաշտերուն մէջ արօրուած
Բըռուցքներով դիպագնեբու վենոգի,
Եւ կուրծքերով զոհերու...

Ի՛նչ արեւներ պիտի խմորուին հողին մէջ
Տակաւին թաց արիւնով
Որուն ոյժէն պիտի աստղերն հոյլ ի հոյլ
Այսօններուն մէջ թափին,
Եւ ծիր կաթինը ճերմակ
Պիտի հոսի եթերային հեղեղով
Գիշերն ի բուն՝ դէպ ի երկիրը բացուած
Ինչպէս լայն վերջ մը, որուն մէջ կը նընջէ
Ոսկեվառ հունձքը վաղուան...

Բայց տակաւին պղզտոր, պղտոր գետերուն
Ջուրը միայն կ'ողողէ
Դաշտերուն ծոցը կարմիր
Ուր վրժի ծիւն հրաբուխի պէս կը մեծնայ...
Կըմարքներէն կ'ընծիւղեն
Հոս հոն քանի մը ծաղիկներ դալկահար...
Այս է գարունն Հայրենիքիս տարաբախտ...
Տերեւթափ ծառի մը ոստը միայն.
(Բսէ՛ք, աշունը գարնան հետ կը դառնայ,
Խորշակը սիւժ է, և բուրամը վարդին
Կը ծաւալի դիակներու բոցերէն...)
Աւերակի մը վերէն կ'օրօթէ
Մահաստաբուռ մեն տըխուրութիւն մը կեանքի...

Ա՛հ, գոնէ փունջ մը կակաչներ սըփոռելու
Մեռելներու յիշատակին, ու գոնէ
Ըլլար դափնի մը կանանչ
Եղբայրօրէն կապելու
Հերոսներու ճակատին,
Ու քնարին վե՛հ քերթողներուն որ ինկան,
Արծիւներու պէս ինկան
Արևն իրենց հոգիներուն մէջ բանտած...

Ո՛վ Հայրենիք, եղբարբախտ Հայաստան,
Գերեզմաննոց ամայի,

Ո՛ւր է գարունդ, ո՛ւր են գետերդ լուսահոս,
 Ո՛ւր է արեգ, ո՛ւր իր հեղեղը ոսկի
 Սև լեռներուդ կողերէն
 Դաշտերուն մէջ՝ ուր կեանքը յորդ արթով
 կը բարձրանար և կ'ուռէր...
 Բայց դուն գարուն ես արդէն,
 Մահ կը բուրսի՝ բայց մահուան ծոցը դարձեալ
 Անմահութիւնդ արելի մեծ տեսիլքով
 Իմ աչքերուս կ'երևի,
 Երբ աւերակ ես, աւերակ և տըխուր
 Հոգիս նոճի մը կ'ըլլայ,
 Եւ կուրծքիդ վրայ կը խոնարհի թաթաղուն,
 Արտասուներովը մայրերուն որ ծնան
 Դիւցազուններդ ու զոհաւոններդ համու...
 Գարուն, գարուն ես, ծաղիկներդ ահա
 Վրէժի շունչով կը բացուին
 Նահատակի և հերոսի կուրծքերէն...
 Վարդահեղեղ գարուն, գարուն ես ամբողջ,
 Եւ դափնիներ կը ծաղկին
 Մեհանաներուդ ըստուերին մէջ թափանցիկ...
 Եւ երկընթիւ մէջ ահա՝
 Կ'արփաթեւէ Նեմեսիս,
 Դրաններփառ աստուածուհին վրիժագեղ,
 Որուն ձեռքին մէջ կը դնէ յաղթապանծ
 Աղագարութիւնն իր սուրին շանթը կարմիր...
 1918 «Արդոյի Դղորդոցներ»

ԱՐՄԵՆ-ԵՐԿԱՅՔ



ՊԱՏԵՐԱԶՄԻ ԽԱՒԱՐՈՒՄՆԵՐՆ

Մարդկանց մէջ, առաջին խաւարումն
 որ գուշակուած է, կը գրէ Հոկտաւիանոս
 Դրանտոսի Բիանկո Նոսովա տետրոճիսի
 մայիսի 16 թուի մէջ, կարելի է ամենայն
 իրաւամբ ասուիլ՝ խաղաղութեան խաւա-
 րումն։ Ատեղագէտն՝ որ կարաց կատարել
 այդ աստեղաբաշխական քաջագործութիւնն
 եղաւ թաղէս Միլետացին, հին դարերու
 անուանի փիլիսոփաներէն մին։ Բնական
 է որ գուշակութիւնները ներկայ ժամանա-
 կին մատնամատիցական ճշգրտեմամբ չէին
 կատարուեր, յորում մինչև անգամ մաներ-
 կրորդներն ի հաշուի կ'առնուին, բայց
 այն ժամանակներու համար զարմանալու
 բան է, ճշգրտուեցաւ ճիշտ այն տարին,

որու համար նախանշանակուած էր։ Ահա
 թէ ինչպէս թաղէսի խաւարումն, որ տեղի
 ունեցաւ Մայիսի 28^{ին} յամի 585 յառաջ
 քան զՔրիստոս, կարելի է կոչել՝ խաղա-
 ղութեան խաւարումն։ Հերոդոտոս երկա-
 րամեայ պատերազմի մը պատմութիւնն
 կ'ընէ ընդ մէջ Ասորաց և Մարաց շուրջ
 600^{ին} Ն. ք. զՔրիստոս. որ իսկ և իսկ կը
 դարարի յանկարծակի երկնքի մթազնելովն։
 Պատերազմի կատարի կռուի միջոցին, կը
 պատահի արեւու բոլորական խաւարումն,
 երկու կողմերն ալ այնքան կը սարսափին
 երկինդով, որ առանց այլեայլութեան կը
 ձգեն գետին իրենց զենքերը, և շուտով
 հաշտութեան դաշն կը կնքեն, ամրապնդե-
 լով կրկնակի ամուսնութեամբ։ Պատահա-
 ծիս յիշատակին համար, պատերազմի դաշ-
 տին մօտիկ ժայռերու վրայ կը փորագրուի
 մեծ պատկեր մը, որ զխաւարումն կը ներ-
 կայացնէր։ Այս ժայռերը վերջին ժամա-
 նակներս յայտնագործեց Տեքսէի, Բոզար-
 քեօյի մօտերն, կապագողովկոյ հիւսիսային
 արեւելեան կողմն, և Բարթ, ուր որ այցելեց
 արեւի ուշ, հաստատեց թէ անոնք կապ
 ունէին թաղէսի գուշակած խաւարումի
 հետ։

*
*

Հին և Միջին դարերու ժամանակ, մար-
 դիկ աստղաբաշխութեան շնորհիւ, խաւա-
 րումները կը համարէին ճակատագրական
 դժբաղդութեանց նշան, մասնաւորապէս
 թագաւորաց և իշխանաց համար։ Անցեալ
 1918 յունիսի 8^{ին} մեծ խաւարումն, չուգեց
 ստել այն սին հաւատը. և յաջորդեց,
 մի քանի ամիս ժամանակամիջոցում, խոր-
 տակումն երկու հզօրագոյն կայսերութեանց
 աշխարհի, Գերմանիոյ և Աւստրիոյ և շատ
 մը փոքր թագաւորութիւններու. զանազան
 պաշտօնանկ իշխաններ, անեկամուտ մնա-
 ցածներ, արեւի են քան ձեռքի հինգ մատ-
 ներն։

Պէտք է խելամուտ լինել, որ այս տարւոյ
 բոլորական խաւարումն, ոչ նուազ ուշա-
 դրութեան է արժանի իւր նախորդէն, և